ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ · ՆԻՒ ԵՈՐՔ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, ԹԻՒ 18 · ԱՄԲՈՂՋԱԿԱՆ

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

The Haik,

A Journal devoted to Armenia, Armenians, and Oriental Peoples.

Published Monthly

BY

M. S. GABRIEL, M.D.,

AT

341 West 23d Street,
New York City.

SUBSCRIPTION, ...

Advertisement rates are 10c. per Agate line per insertion

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թմբագրական նշմարք.—Բան մը զոր անմիջապէս սնել պէտք է.—Հայ ազգութեան պահպանիչ հայ լեզուն.—Խտրական ոգին մեր մէջ.—Առողջաբանական. փորի պնդութեան դէմ դեղ.—Վիճակագիր Ամերիկայի Հայոց, ԻԱԼԻԲ.—Այլեւայլք.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

ԲԱՆ ՄԸ ԶՈՐ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԱՆԵԼ ՊԷՏՔ Է

Կ. Պոլսոյ մէջ վերջին ոմբարկութիւնը առիթ չեղաւ կոտորածի. ի՞նչ է պատճառն:

Երկու ենթադրութիւն կրնանք անել: Կրնայ լինիլ որ Սուլթանը, իրեն ծանօթ միջազգային գաղտնիքներէ սանձահարուելով՝ չուզեց այդ միջոցին ջարդ անել մայրաքաղաքին մէջ, մանաւանդ որ այս անգամ Ցոյն և Հայ միանգամայն պիտի լինէին նշաւակ և դիմադիր, պարագայ մը որ աւելի ծանր կերպարան պիտի տար խառնաշփոթութեանը: Կարելի է նաև ենթադրել թէ Սուլթանը ջարդի քաղաքականութենէն հրաժարած է՝ տեսնելով երկրին տնտեսական քայքայումը, գործոց դանդաղութիւնն և տրոց գանձման յարաճուն դժուարութիւններն:

Ո՛ր ենթադրութիւնն ալ որ ճշմարիտ լինի, մեզ կը մնայ զգուշաւոր քաղաքականութեան մը հետեւիլ և մեր ջանքերը առ այժմ ուղղել դիւանագիտական միջոցներու:

Դիւանագիտական միջոցը որ ինքզինք կը թելադրէ այս պահուս, է կշիռ ունեցող անձերէ Ազգային կեդրոնական Յանձնախումբ մը կազմել ի Բարիզ և անոր միջոցաւ դիմում անել Ռուսիոյ և Ֆռանսայի դաշնակից կառավարութեանց՝ յանուն հայ ազգին և անոր ցաւոց դարման հայցել:

Գիտուն ազգային մը հետևեալը կը գրէ մեզ Զուիցերիայէն Սեպտ. 3 թուականաւ—

«ՀԱՅՐ»ի վերջին թիւին մէջ «Ազգը և իւր գլուխը» յօդուածնիդ շատ կը գովեմ: Մե՛ղք որ Եւրոպայի մէջ կարգ մը խօլ յեղափոխականներէ դատ ներկայացուցիչներ չունինք, և բոլոր Եւրոպա Հայերը անոնց պէս անխոհեմ, անխելք, անխիղճ, և socialist կամ anarchist կը կարծէ կամ կարծել կը փորձուի: Երանի՛ թէ Հայ Ազգը Եւրոպայի մէջ շնորհքով ներկայացուցնող մարմին մը ունենայինք զգօն, կրթուած, ողջամիտ և միանգամայն քաղաքագէտ անձերէ բաղկացած:

Նիւ Եորքցի վաճառական ազգային մը կը գրէ մեզ սա կարճ բայց կարևոր տողերը, Սեպտ. 25 թուականաւ. —

Սուլթանէն վախնալու տեղ ունինք, միշտ պիտի վախնանք անկէ քանի որ նա Եւրոպայէն չի վախնար այլ ևս· չի վախնար վասն զի Եւրոպայի «տարան առաւ,» քրիստոնէութեանը «տարան», լրագրութեանը «տարան,» սպառնալիքներուն «տարան,» և հիմա ամէնը փարայով կըրնայ իւր կողմ դարձնել, ասիկա գիտէ: Սուլթանը անցեալ երկու տարիները կարելի է հարիւր լրագիր ունէր Եւրոպայի ու Ամերիկայի մէջ· իսկ մենք ազգանուէր Հայերս մէկ ՀԱՅՐ մը ապրեցնելու չափ փարա չենք կրնար գտնել որ շաբաթաթերթի վերածուի:

***

ԼՈՒՍ ՏԵՍԱԻ

Մենտոր Անգլիերէն Լեզուի

Աշխատասիրեաց և հաւաքեց

Տիգրան Մ· Պետիկեան

Նիւ Եորք, 1897:

336 երես, կը պարունակէ համառօտ քերականութիւն մը, նամականի մը, խօսակցութիւն ընտանեկան, առեւտրական և այլն, և Հայերէնէ Անգլիերէն ու Անգլիերէնէ Հայերէն երկու բառարաններ: Եօթը հազար բառ կայ:

Դինն է 50 սենթ կամ 2½ ֆրանք:

Դիմել առ ՀԱՅՐի խմբագիրն
341 W. 23d St., N. Y.

Արժէքը կանխիկ չյղողին գիրք չենք կրնար յղել:

«Մենտոր» գիրքը զոր Տիար Պետիկեան հաւաքեց և հրատարակեց, ամենակարևոր է մեր գաղթականաց իբրև գործիք մը անգլիերէն լեզուն սովրելու: Ջարմանք է որ ամէն մարդ օրինակ մը գնելու չի փութար: Խմբագրութիւնս ոչ հեղինակն է և ոչ ալ հրատարակիչը, բայց կը ճանաչէ գրքին մեծ օգտակարութիւնն և գընոյն ածանութիւնը:

ԸՈՒՈՂՋԱՐՈՒԹԻՒՆՔԱՀԱՏ

ՓՈՐԻ ՊՆԴՈՒԹԵԱՆ ԴԷՄ ԴԵՂ

Փորի պնդութենէ մեր պանդուխտները շատ կը գանգատին: Կ'երևի թէ այդ վիճակը շատ հասարակ դարձած է մեր գաղթականաց մէջ: Աղիքներուն կանոնաւոր կերպով չգործելէն պէսպէս վնասներ կը ծագին, թէև վնասը կրողները չեն գիտեր ընդհանրապէս թէ պատճառն ի՞նչ է:

Հետևեալ դեղագիրը կը յանձնարարեմ թէ այր մարդոց և թէ կանանց համար, որոնք փորի պնդութիւն կը կրեն:

Cre'osote de hetre	10	grammes
Glycerine	20	———

Այս խառնուրդէն 15 կաթիլ կաթեցուր կէս բաժակ ջրոյ մէջ և խմէ կերակրէդ վերջը, առտու և երեկոյ:

Արդիւնքին համեմատ կրնաս քանի մը օր վերջը սկսիլ օրը միայն մէկ անգամ խմել:

Օրը մէկ անգամ կամ երկու օրն անգամ մը գործածէ շարունակ ամիս մը կամ երկու: Դեղը անվնաս է:

Դեղագրին անգլիերէնը սապէս է·

Creosote of beechwood	10	grammes
Glycerin	20	———

Պզտիկներուն համար 4 կամ 5 կաթիլը հերիք է:

JOHN C. MORRISON

Ց· Ս· ՄՕՐԻՍԸՆԻ

ԴԵՂԱՐԱՆԸ

Կը գտնուի ի թիւ 262 Ութերորդ Էվընիւ, Մեծ Օբէրային հանդէպ, 23 և 24 րդ փողոցներուն միջև:

Վստահելի դեղեր, բանաւոր գներով կը ծախենք:

ՀԱՅ ԱԶԳՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆԻՉ ՀԱՅ ԼԵԶՈՒՆ

Ա

Հայկական եկեղեցին, պարագայից բերմամբ, ազգային հանգամանք մ'ունեցեր է մեր մէջ և կարևոր դեր է կատարեր ազգը կազմալուծումէ պահպանելու։ Դա ճշմարտութիւն մ'է պատմական, անժխտելի։ Բայց ատկէ չի հետևիր, ինչպէս սմանք կը թուին կարծել, թէ հայկական եկեղեցին յաւիտեան պահպանիչը պիտի մնայ հայութեան։ Միջին դարուց մէջ հայութիւն և հայ եկեղեցի համազօր բացատրութիւններ էին, բայց համազօրութիւնը պատահական և առժամեայ էր։ Կրօնական հաւատալիք, ճիշդ վասն զի հաւատալիք են և ոչ գիտութիւն, չեն կրնար ազգի մը բոլոր անհատներն հաւատալի լինիլ ուր որ անհատներն իրենք իրենցմով խորհիլ սովորին, և ոչ կրնան իբրև ազգային կապ ծառայել ուր որ խղճի ազատութիւն յարգուի։

Արդէն դէպքերն ապացուցած են այդ տեսութիւնը։ Ժամանակ մը կար երբ բոլոր Եւրոպա կաթոլիկ էր։ զարդիս ամեն ազգի մէջ կան բողոքականներ ալ փոքր կամ ստուար համեմատութեամբ։ Նոյնն եղած է մեր մէջ ալ։ Լուսաւորչականին քով ունինք կաթողիկեայն և աւետարանականը։ Կային նաև ափ մը յունադաւաններ Ակին շուրջը։ Այժմ Սալմաստէն կը գրեն ՄՇԱԿԻՆ թէ այն կողմն ալ վերջերս ռուս միսիոնարի մը ջանիւք օրթոտոքսութիւն կը քարոզուի Հայոց, որոցմէ արդէն 12,000 հոգի ընդունած են յունական դաւանանքը։ Ամերիկեան Պորտի միսիոնարներն ևս առատ հունձք մը հնձելու առիթ ունին հիմա։ իրենց հովանւոյն ներքև հազարաւոր հայ որբեր կը խնամուին, որոց մէկ մասը, հակառակ մեր բոլոր գոռում գոչումին, պիտի լինին բողոքական։ Ուրեմն ազգին մէջ թէ՛ բողոքական, թէ՛ յունադաւան և թէ կաթոլիկ հատուածներն ստուարանալու վրայ են չնորհիւ մեր վերջին ազգային աղէտներուն։ Դէպքերը կը բռնադատեն զմեզ ընդարձակել հայութեան սահմանը և ընդունիլ թէ հայկական եկեղեցիէն դուրս ունինք Հայոց աճեցուն մէկ մասը։

Բ

Մինչ այսպէս հայկական եկեղեցւոյ դերը, իբրև ազգութեան պահպանչի, կը տկարանայ, հարկ է ոյժ տալ միւս այն գործօնին, այսինքն հայ լեզուին, որ աւելի իսկ հին, նուիրական ու հայկական է քան զհայկական եկեղեցին։ Հայ լեզուն հայ ազգութեան պատահական մէկ հանգամանքը չէ այլ անոր հոգին ու միտքը, անոր ծուծն և ոյժն է։

Ուրիշ բաները հաւասար ենթադրելով՝ Հայ մը այնքան աւելի խորապէս հայ է որքան աւելի հմուտ է իւր ազգային լեզուին։

Մեր Մխիթարեան երկու Միաբանութեանց հայութիւնը կ'ապրի ու կը սնանի միայն չնորհիւ հայ լեզուին որուն ուսանող ու մշակիչ եղած են, գի յայտնի է թէ կաթոլիկութիւնը, բազում ազգերու դաւանանքը լինելով, այս կամ այն ազգային զգացման ոյժ տալու բնութիւնը բնաւ չունի։

Ազգային զգացման վերարծարծումը Կիլիկիոյ բողոքական Հայոց մէջ այն սքիրալի արդիւնքն ունեցած է որ այժմ թբրքախօս Այնթապցիներն իրենց նախակրթարաններու մէջ իսկ հայերէնի փոխած են դասախօսութեան լեզուն և բողոքական մանկտին հայախօս եղեր է։ Եւ այս հայախօսութիւնը ի հարկէ նոր սնունդ և թափ պիտի տայ հայկական այդ հատուածի ազգայնութեանը։

Զեխերը իբրև առանձին ազգութիւն արթնցան ու կը գործեն չնորհիւ այն զարմանալի ազդեցութեանը զոր ունեցաւ իրենց վրայ ազգային լեզուի ուսումը որմէ օտարացած էին։

Կ'ուզե՞նք որ հայ եկեղեցիէն դուրս գտնուող մեր արենակիցք չօտարանան, աշխատի՛նք անոնց մէջ հայերէնի ուսումը և յարգը յառաջացնել։

Այն բողոքական միսիոնարը որ չի՛ ուզեր հայ քահանայ մը կրօնուոյց ունենալ իւր հայ որբերուն համար, բնաւ առարկութիւն չունի հայերէն լեզուի ուսուցման դէմ, ընդհակառակն՝ Տաճիկներէն յափշտակուած և հայերէնը մոռացած

հայ տղայքը նորէն կը վարժեցնէ հայերէն խօսելու։

Ուրեմն խաւարամտի է կարծելթէ միսիօնարներն զհայ տղայքը հայութենէ կը հանեն։

Ցունաչաւան դարձող Հայերն ալ կըրնան իրենց ազգութիւնն ամուր պահպանել եթէ իրենց համար եկեղեցական պաշտամունքը հայերէն լինին ոչ թէ յունարէն կամ ռուսերէն։ Արդէն երկու եկեղեցեաց, հայկականին և յունին, միջև տարբերութիւնը քանի մը անկարևոր կետերու վրայ է, այնպէս որ յունականը հայկական և հայկականը յունական կը դառնայ եթէ միայն լեզուի փոփոխութիւն լինի։

Բումանիոյ Հայերը չպիտի պաղէին ու օտարանային հայութենէ եթէ նոցա առաջնորդներն հնարէին հայերէնը կենդանի պահել նոցա մէջ։

Գ

Գաղթային նոր և կարևոր հոսանք մը կ'ելնէ այս միջոցիս Հայաստանէն և օտար երկիրներու մէջ կը տարածուի։ Խնդիր է թէ Եւրոպիոյ և Ամերիկայի և Ափրիկէի մեր ստուարացող գաղթականութիւններն ինչպէս պիտի պահուին հայութեան մէջ։ Հայ եկեղեցի և հայերէն լեզուաւ պաշտամունք հաստատել միջոցներէն մին է, բայց աւելի ևս ազդեցիկ, մանաւանդ ներկայիս, միջոց մը պէտք է մեծ խնամով աւելցնել, որ է հայերէն լեզուի գործածութեան աշխարհական և ազգային առիթները։

ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ մեծ դեր կատարել կոչուած է հիմա հայ գաղթականութիւններն օտարացումէ պահպանելու։ Իտալիոյ մէջ անցեալ դարերում ունէինք բազմաթիւ հայ եկեղեցիներ, բայց դոքա չզօրեցին իտալաբնակ հայութիւնը փրկելու։ Այժմ լրագիրը հզօր օժանդակ մ'է ամեն ուրեք, և եթէ լաւ գործածուի, կրնայ հայերէնը ու հայկական շահերու զգացումը կենդանի պահել ընդ հանուր։

Այս տեսակետով մեք շատ գոհ և շատ ուրախ ենք տեսնելու թէ Պուլկարիոյ, Եգիպտոսի և Ամերիկայի մէջ կան կամ կը հիմնարկուին հայ լրագիրներ։ Ի Գահիրէ կը հրատարակուի ՓԱՐՈՍ, շատ շնորհքով հայերէն թերթ մը։ Ի Պուլկարիա կը հրատակուին «Իրաւունք», «Խուզակ», և «Կատակ», որոնք աւելի կամ նուազ օգտակար են դոնէ իրրև հայերէն լեզուի տարածիչներ։ Միացեալ Նահանգաց մէջ ալ եօթը տարիէ իվեր այս թերթը, «Հայք»ը կը հրատարակուի անընդհատ, և կը շրջաբերի այս երկրէն դուրս ալ, Ափրիկէէն մինչև Հնդկաստան, բոլոր հայ գաղթականութեանց մէջ։ Որովհետև ներկայ յօդուածս հայերէն լեզուի ազգային դերին վրայ է, առիթը կը ներէ յիշեցնելու թէ այս թերթը սկիզբէն ի վեր հայերէն լեզուի քննութեան և ուսման երբեմն երբեմն նուիրեր է իւր էջերը՝ այն համոզմամբ թէ թերթը ոչ միայն գաղափար սփռելու և ազգային խնդիրն ուսումնասիրելու գործի մ'է այլ և հայերէն լեզուն տարածելու և մշակելու։ Ուրեմն թող թերթիս նպատակէն դուրս չկարծուի եթէ այսուհետև ալ երբեմն հայերէն լեզուի վերաբերեալ խնդիրներ քննենք ՀԱՅԲԻ մէջ։

Եւ մեր լեզուին մէջ շատ բան կայ քննութեան կարօտ։ Հայերէն լեզուն աշխարհի ամենալաւ լեզուներէն մին է· որքան աւելի ուսանի ոք այս լեզուն, այնքան աւելի կը սքանչանայ անոր։ Գարագաշեան յիրաւի կը գրէր անցեալ օր առ Ուսումնական Խորհուրդն· «Հիացեալ եմ ես այն լեզուին որ մի միայն պարծանքն ու մեծութիւնն է որ կը մնայ մեզ այժմ և կուգայ մեզ իրրև ժառանգութիւն մեր հնագոյն նախնիներէն, և զոր բառնալ մենք անհնար է։»

Ծեր հայկաբանին այդ խօսքերը լուրջ ուշադրութեան արժանի են։ Հայկական իշխանութիւններն մարած են, թագը մեր գլխէն ինկած է, բայց ազգային պանծալի և փառաւոր լեզուն, կը մնայ և ցորչափ մենք սիրենք ու գնահատենք զայն, ցորչափ պահել ուզենք զայն, ոչ ոք կրնայ յափշտակել զայն մենէ։ Հայութիւնը պիտի պահպանուի ցորչափ հայերէնը սիրուի և խօսուի մեր մէջ։ Եւ որքան աւելի լաւ ճանաչենք մեր լեզուին գերազանցութիւններն այնքան աւելի պիտի սիրենք զայն ու պիտի գործածենք։

Հոս ինքնին ի մէջ կուգայ արդի հայերէն լեզուի մշակութեան խնդիրն։ Հայերէն լեզուն, այնքան պանծալի, կրնայ վնասուիլ, արատաւորիլ պէսպէս գրիչնե-

ռու ներքև։ Բազում այլանդակ, սխալ և խժալուր բառեր ստեղծուած են վերջերս և լեզուին մէջ հաստատուիլ կը սպառնան։ Սխալ, կամայական ուղղագրութիւններ կը մուծանեն ոմանք, անպատկառ վարուելով մեր լեզուին հետ։ Այդ բոլոր արտառոցութեանց դէմ ելնել, բողոքել պէտք է· պիտի բողոքենք։ Նոր բառեր չինելու և շարադասութեան մասին որոշ սկզբունքներ ի մէջ բերել, պարզել պէտք է, և ենթարկել ձեռնհասից քննութեան, որպէս զի լեզուն իւր ներկայ ճկուն և առճուն հասակին մէջ առնու ճշմարտապէս հայկական կազմ և իրան։ Պիտի փորձենք և զայդ։

Ջերմ նախանձաւոր լինինք մեր ազգային լեզուին մաքրութեանը, գործածենք զայն, գրենք անով, կարդանք անով։ ՊԱՀՊԱՆԵՆՔ ՀԱՅԵՐԷՆԸ, և ԿԸ ՊԱՀՊԱՆՈՒԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ։

ԽՏՐԱԿԱՆ ՈԳԻՆ ՀԱՅՈՑ ՄԷՋ

Մշակի Խմբագրական յօդուածն է հետևեալը, որուն կը հրաւիրենք Ամերիկայի Հայոց ուշադրութիւնը։

ԿՂԵՐԸ ԱՆՈՒՂՂԵԼԻ Է

Ամերիկայի հայերի Նորընտիր հոգևոր հովիւը՝ վերջին ժամանակներս մի ընդհանուր հովուական շրջաբերական է ուղղել Ամերիկայի հայ գաղթականութեան, որից երևում է, որ Ամերիկայի հայ գաղթականութիւնը որոշել է՝ իր ներքին, ազգային գործերը վարելու համար, մշակել և գործադրել մի ներքին կանոնագրութիւն։

Այդ նպատակը իրագործելու համար որոշված է՝ գումարել Ուստր քաղաքում ներկայացուցիչների ժողով։

Մենք միանգամայն համակրելի ենք գըտնում Ամերիկայի հայ գաղթականութեան ձգտումը, սակայն այդ նպատակը իրագործելու և ամբողջ հայ կոլոնիային օգտակար լինելու համար, պէտք է համախմբվել, միահամուռ և միաբան ոյժերով գործել։ Այդ տեսակէտից մենք անպայման կերպով պախարակում և դատապարտում ենք, իբրև ընասակար, հակակուլտուրական և նեղասիրտ քաղաքականութիւն, այն որոշումը, որ արել է առժամանակեայ ազգային վարչութիւնը, կամ Ուստրի եկեղեցական հոգաբարձութիւնը իր նախագահի հետ միասին։—թոյլ տալ մասնակցել ազգային ընդհանուր երեսփոխանական ժողովին Ամերիկայում ապրող միայն այն հայերին, որոնք «Հայաստանեայց ազգային եկեղեցւոյ անդամներն են»։ Ուրեմն, աւելի պարզ խօսելով, ընդհանուր ազգային գործին մասնակցել իրաւունք տրվում է միայն այն հայերին, որոնք դաւանութեամբ լուսաւորչական են, իսկ մնացածները, բողոքական, կաթոլիկ կամ այլ դաւանութեան պատկանող հայերը զրկվում են այդ իրաւունքից, որովհետև լուսաւորչական չեն։

Ամերիկայի պէս մի ազատ երկրում, քսաներորդ դարի շեմքում, վերջապէս թիւրքաց Հայաստանի սարսափելի դառն փորձերից յետոյ, յարուցանել դաւանաբանական խնդիր, քարոզել միջնադարեան մի գաղափար, որ վաղուց դատապարտված է, իբրև ոչ մի կրիտիկայի չը դիմացող, մեզ թվում է ոչ միայն անժամանակակից, այլ և վայրենի։ Հայ հոգևորականութիւնը չը կամեցաւ կամ չը կարողացաւ մինչև այժմ հասկնալ, որ անցան այն «երանելի» ժամանակները, երբ հայ համարվում էր միայն նա, ով լուսաւորչական էր։ Այժմ այդպիսի փթած, ընասակար գաղափար այլ ևս ոչ ոք չէ դաւանում· այդպիսի ջախջախված զէնքերով այլ ևս ոչ ոք չէ կռւում, և ներկայ հանգամանքներում նորից յարուցանել կրոնական աններողամտութեան հարց,—դա միայն նոր ապացոյց է այն բարոյական վերջնական սնանկութեան, որին հասել է հայ հոգևորականութիւնը։

Մենք յոյս ունինք, որ Ամերիկայի հայ գաղթականութիւնը իր ամբողջ ոյժով կը բողոքէ այդպիսի մի միջնադարեան, խաւար գաղափարի դէմ և թոյլ չի տայ, որ ազգային համերաշխութեան սկզբունքը վտանգի ենթարկվի աններողամտութեան և մոլեռանդութեան ներկայացուցիչների կողմից։ Եւ, վերջապէս, մենք չենք հասկանում, ի՞նչ հարկաւորութիւն կայ Ամերիկայի պէս երկրում ազգային ներքին ինքնավարութեան խնդիրը կապել անպատճառ հոգևորականութեան և եկեղեցու հետ· այդ ասպարիզում ժողովուրդը կարող է ամենայն հեշտութեամբ գործել, առանց հոգևորականութեան միջամտու-

թեան և աջակցութեան, քանի որ հայ հոգևորականութիւնը իր տգիտութեամբ և միջնադարեան դաղափարներով չէ կարողանում ընթանալ ժամանակի պահանջների հետ և իր շահերը գերադասում է ժողովրդի շահերից։

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՅՈՑ

ԻԱ.—ՓՐՈՎԻՏԷՆՍ Ր.Ա.

Բաղաքիս մէջ մօտ յիսունի չափ Հայեր իրենց անձնական գործերն ունին. 13 պղտավաճառ, 8 ճաշարան, 5 նպարավաճառ, 5 դերձակ, 6 հնակարկատ, 4 սափրիչ, 2 ածխավաճառ, 2 հանդերձավաճառ, 3 հացագործ, 3 մանրավաճառ, 1 արևելեան գորգեր ծախող, 1 գինեվաճառ և 1 թրքական սրճարան, որոցմէ շատեր բաւական ընդարձակ գործ ու կարգարուն և լի խանութներ ունին։

Հոս՝ Հայեր մեծաւ մասամբ կ'ապրին խմբովին տուներու մէջ բնակելով, տուներ բաւական վայելուչ կահաւորուած որքան որ կը ներէ իրենց կարողութիւնը. ուտեստի և զգեստուց մաքրութեան նմանապէս բաւական խնամք կը տանին, միայն փոքր մաս մը կայ, որոց համար մաքրութիւնը ընդասակար նկատուած է։

Ինչպէս ամեն տեղի, նմանապէս քաղաքիս Հայեր ունին իրենց ներքին թերութիւնները, թերութիւններ՝ որք միշտ անպատուաբեր են Հայ անուան, շատ անգամ իրենց մէջ ծագած առևարական կամ ամէն փոքրիկ խնդիրներու համար կառավարութեան կը դիմեն ու հոն կը վերջացնեն. ուրախալի է ըսել սակայն թէ քաղաքիս հոգևոր հովիւ Գեր. Հայր Սիսակեանի աստ գալէն 'ի վեր քիչ անգամ տեսնուած է կառավարութեան դիմելին, այլ Նորին Գերապատուութեան միջոցաւ կը վերջանան խնդիրներ կը յուսամ թէ օր մ'ալ իրենք իրենց մէջ համաձայնել սովրելով, այդպիսի ոչինչ խնդիրներով չպիտի զբաղեցնեն հոգևոր հովիւը։ Ունին նաև ուրիշ թերութիւններ որ կը յուսանք սակայն անոնք ևս պիտի ուղղուին շնորհիւ Հայր Սիսակեանի, որը՝ ամեն կերպիւ կը ջանայ իրեն յանձնեալ հօտն միշտ լաւ ու նախանձելի ուղղութեան մէջ պահելու։

Անցեալոյն մէջ կուսակցական ահագին կռիւներ կ'ունենային ու կը վերջանային այդ կռիւներ բազմաց գլուխներ պատռուելով, այժմ ընդհակառակն շատ սիրով են կուսակցութիւններ իրարու հետ և չէզոքներ կուսակցութեանց հետ. կը պատահի երբեմն հրապարակային ժողովներու մէջ քննադատական խօսակցութիւններ, որք եթէ անցեալոյն մէջ պատահէին, հոն պատերազմ կը լինէր. սակայն այժմ ուշադրութեամբ կ'ունկնդրեն և կը լռեն։ Հոս գտնուող կուսակցութիւններն ներկայիս վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւն և Դաշնակցութիւն են, որոնք երբեմն իրենց առանձին հրապարակային ժողովները կ'ունենային. սակայն կը լինին այժմ այդ ժողովներ միայն ազգային անուան տակ ընդ նախագահութեամբ Հայր Սիսակեանի։ Երբեմն Նազար—պէկի Հընչակն ալ կը ցրուի հոս Փրովիտէնսի Մասնաճիւղի կնքով։ Բայց չգիտենք թէ իրօք Մասնաճիւղ կ'այ, թէ գոյութիւն ունեցողը միայն կնիքն է, զի հրապարակի վրայ բնաւ ձայներնին չի լսուիր։

Գեր. Սիսակեան Հօր աշխատութեամբ վարձուեցաւ հոս մի ընդարձակ սրահ որ տարուան ամբողջ օրերը Հայոց տրամադրութեան տակ է. հոս տեղի կ'ունենան առ հասարակ եկեղեցական արարողութիւնք և մասնակի ու հրապարակային ժողովներ. հոս դրուած է նաև գրադարանը։ Գրադարանի հաստատութիւնը որ գրեթէ երեք ու կէս տարիներ կը լինի, ունի այսօր մօտաւորապէս հինգ հարիւր կտոր գրքեր որք բերուած են ընտրանօք. այս գրադարան՝ ունի իւր առանձին Միութիւնը, որոյ անդամոց թիւը եօթանասունի կը հասնի. բաց է ամեն կիւրակի և քառասունէ աւելի գրքեր դուրս կ'ելնեն կարդացուելու համար. ունի նաև հետևեալ լրագիրներն ու հանդէսներն, Մշակ, Մասիս, Արմենիա, Արարատ, Արևելեան Մամուլ, Հանդէս Ամսօրեայ, Տարազ, Աղբիւր և Հայք. միայն ընթերցող անդամոց թիւը պակաս կը գտնենք երբ կը բաղդատենք քաղաքիս հայ գաղթականութեան թուի հետ. չգիտենք թէ է՞ր շատեր հեռու կը փախչին թանգարանէն, երբ ընթերցանութեան պայմաններն շատ աւելի դիւրամատչելի են. ամբողջ մէկ տարուան համար մէկ տոլար միայն, այն ալ եթէ ուզեն չորս բաժնով կրնան վճա-

բել, մինչդեռ շատ մ'ումպէտ և անպատուաբեր տեղեր տասը տոլարներ կը ծախսեն։

Թանգարանի վարչութիւնը որ սովորութիւն ունի տարին մի քանի անգամ ազգային ներկայացումներ տալու, կը պատրաստուի քիչ ատենէն Դուրեանի սև հողը ներկայացնել. դերասանական երկու խումբ կազմած լինելով անմիջապէս յետոյ պիտի ներկայացնէ նաև Պէշիկթաշլեանի Արշակի ողբերգութիւնը։

Քաղաքիս Հայը ունի իրեն համար պարծանք նաև Հայ նուագածուաց խումբ մը, որ ինքն ուրոյն միութիւն ունենալով կը ջանայ այս ճիւղ մշակել Հայ երիտասարդաց մէջ. առ այժմ կը բաղկանայ գրեթէ 15 անձերէ և օրըստօրէ աւելնալու մեծ յոյս կայ. ամսոյս 25 ին նուագահանդէս մը տալու պատրաստութեան մէջ է. սոյն հանդիսին պիտի մասնակցի քաղաքիս Հայ իգական սեռը Անգլիերէն մի քանի երգեր երգելով, կարծես Հայերէն երգեր կը պակսէին։ Ինձ զարմանք կը թուի իգական սեռի մի այսպիսի հանդիսի մասնակցումն, որ քաղաքիս մէջ որ գրեթէ յիսունի չափ հայ կիներ ու օրիորդներ կը գտնուին, ասոնք այն աստիճան կդգիացեալ կ'ապրին, որ մինչև իսկ շատ քիչերը զիրար ճանչնալու պատիւն ունեցած են. մեծ ամօթ և անպատուութիւն կը համարին իրենց համար ազգային հանդէսներու մասնակցիլն. չեն ուզեր բնաւ վեր բարձրանալ այն ստրուկ վիճակէն, որոյ ենթակայ ըրած է իրենց սրտերու մէջ արմատացեալ նախապաշարումն. իրենք Ամերիկայի մէջ և ամեն տեղ Հայութեան զարդը պիտի լինին, եթէ իրենցմէ 'իբաց թօթափեն այն հին նախապաշարումները։

Մանաւանդ անոնք որ բարձր կամ մի ջակ վարժարաններու մէջ շատ թէ քիչ կրթութիւն ստացած են, ի՞նչպէս կրնան արդարանալ, երբ միւսներուն հաւասար հին նախապաշարմանց ենթակայ են իրենք ևս. խօսքս Փրովիտէնսի Հայ իգական սեռին համար չէ միայն, այլ ամբողջ Ամերիկայի մէջ գտնուող հայ տիկնանց և օրիորդներու համար է։ Ուստի մէջ կայ Հայ Տիկնանց խումբ մ'որ իր մէջ առանձին միութիւնն ունենալով կը մասնակցի ազգային ամեն հանդէսներու ու մասնաւորապէս գրադարանի ճոխացման. կը փափաքինք որ մեր հայ տիկիններն ու օրիորդներն ալ նոցա օրինակին հետևին։ Կը յուսանք թէ Տիկին Սարկաւագեան, որ իր ուսումնական կարողութեամբ մեծ տեղ մը գրաւած է իր սեռի մէջ, պիտի աշխատի շարժման մէջ դնել իր անձգայ ու անտարբեր համասեռները ի Փրովիտէնս։

ԱՑՏ.

ՀԱՅԿ

ՀԸՆԴԷՍ ԿԻՍԱՄԱՍԵԱՅ

Տարեկան բաժնեգինն է կանխիկ երկու տոլար (տասն ֆրանք)

Հասցէն է

M. S. Gabriel, M. D.
341 West 23rd St., New York.

ԸՅԼԵՒԸՅԼՔ

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՑԱԼՊԱՆԻԱ

Կ. Պ. Սեպտ. 23. — Թէպէտ պաշտօնապէս կը ժխտեն Ալպանիոյ յարոյթը, արիւնահեղ ընդհարում մը տեղի ունեցած է ժողովրդին և զօրաց միջև Փրիզրէնտի մօտերը։

ՆԻՒ ԵՈՐՔ

Եարտըմեան Եղբարց Նիւ Եորքի վաճառատան անդամներէն Տիար Յարութիւն Պերճ Եարտըմեան Կ. Պոլսոյ մէջ Օրիորդ Վիրժինի Ալէքսանեանի հետ ամուսնանալով՝ վերադարձած է ի Նիւ Եորք Տիկնոջը հետ։

Նիւ Եորքի մէջ թանկագին հնութեանց վաճառական Տիար Տիգրան Քէլէկեան՝ Օրիորդ Մաքրուհի Կիւմիւշեանի հետ ամուսնանալով ի Մարսիլիա, վերադարձած է ի Նիւ Եորք Տիկնոջը հետ։

Այս նորապսակ ամոլներն կարևոր յաւելուածներ են մեր բարեկիրթ սակաւաթիւ ընտանեաց վրայ ի Նիւ Եորք։

Հայքի խմբագիրը Հոկտ. 16 ին, շաբաթ երեկոյ ժամ 8 ին, ի թիւ 112 W. 21 րդ փողոց, Ֆռանսացւոց Y. M. C. A. ին պիտի բանախօսէ Ֆռանսերէն լեզուով, նիւթ ունենալով «բժշկականութեան մեծ և գործնական ճշմարտութիւններն։» Ֆռանսերէն հասկցող հայերն ալ, երկու սեռէն, կը հրաւիրուին ներկայ լինիլ։

ՍՈՒԼԹԱՆԸ ԽԻՍՏ ՀԻՒԱՆԴ Է

Կ. Պոլիս, Սեպտ. 23 — Կը գրուցեն թէ Սուլթանը ծանրապէս հիւանդացած է։

***

ԹՈՒՐՔ ՁՕՐՔԵՐԸ ԿԸ ՍԱՏԿԻՆ

Կ. Պ. Սեպտ. 24. Ժանտատենդը թեսա զիոյ զօրաց ջարդ կուտայ. Արդէն 6,000 հոգի տուն դրկուած են իբրև անկար, և ուրիշ 4,000 ալ կը սպասեն փոխադրուլու։

***

ԹԻՒՌԼԷԹ

Երկաթուղիի և նաւու թիքէթներ աշխարհի ամեն մասին համար.

Փոխ—գիր և «մընի օրտրր,»

Փոխանակութիւն օտար դրամոց

Աժան թիքէթի (տոմսի) համար դիմէ միշտ ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿՆ Ի ՊՈՍԹՈՆ

15 State Street.

A. E. Johnson & Co.

Boston, Mass.

ՀԸՇԸՐԸՆ ԵՒ ՀԻՒՐԸՆՈՑ

ԼԱՆԹԷԼՄԻ

Նախաճաշ	40 սէնթ
Կէս աւուր ճաշ	40 սէնթ
Ընթրիք	75 սէնթ

Գինւով մէկտեղ

Սենեակի վարձք Հոթէլին մէջ օրը 75 սէնթ

40 Union Square (East side) bet. 16th & 17th sts.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու Նիւ Լորք

26դ և 27դ. Փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ի Գահիրէ. Դշ. և Շբ. օրերը.

Օտար երկիրներու համար տարեկան բաժանորդագինն է 25 ֆրանք կամ 5 ոսկի

Հասցէն—Editor of Paros.

Bazar Mourour, Caire, Egypte

ՄՈՐԻՍԸՆ ԵՒ ԸՆԿ.

ԴԵՐՁԱԿ

ԱՄԵՆԱՎԱՒ ԱՊՐԱՆՔ

ԱՄԵՆԱՎԱՒ ՁԵՒՈՒԱԾՔ

ԱՄԵՆԱՎԱՒ ԿԱՐՈՒԱԾՔ

և

Գին

Ձափաւոր։

ՀԱՍՑԷ—

DOWNING BUILDING

106 & 108 FULTON ST.

NEW YORK.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Յ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ